ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 փետրվարի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

20
(2870)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻՊ-Ը ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՉՈՒՆԻ՞. ՈՒՐ ԵՆ ԱՆՀԵՏԱՑԵԼ

Ադրբեջանական վերջին սադրանքի հետեւանքով Ներքին Հանդի բնակիչների կյանքի եւ անվտանգության, կրթության իրավունքները կոպտորեն խախտվել են. նման արձանագրում է արել Մարդու իրավունքների պաշտպանը: Հիշեցնենք, որ փետրվարի 12-ին Ադրբեջանը հերթական սադրանքն էր հրահրել Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղի ուղղությամբ, ինչի հետեւանքով հայկական կողմը 4 զոհ էր ունեցել: ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանը երեկ հայտարարել է, որ ադրբեջանական կողմից դիպուկահարներ են աշխատել: ՄԻՊ գրասենյակը դեպքի օրը հենց հայտարարել էր, որ ուսումնասիրություն է սկսել դեպքի առնչությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը ՄԻՊ Անահիտ Մանասյանից հետաքրքրվել է, թե ինչ աշխատանքներ են տարվել, եւ, ի վերջո, իրենց կատարած ուսումնասիրությունների ու մշտադիտարկումների արդյունքում ինչ է պարզվել: «Նախ նշեմ, որ հարցի առնչությամբ մեր ուսումնասիրությունը վերաբերում է բացառապես մարդու իրավունքների առնչությամբ հարցերին: Այս առումով մեր հիմնական խնդիրն է ուսումնասիրության միջոցով բացահայտել, թե արդյոք խախտվել են մարդկանց իրավունքները, ինչ ծավալով են դրանք խախտվել, ինչի հետեւանքով, եւ ինչ հետեւանքների կարող են հանգեցնել այդ խախտումները: ՄԻՊ գրասենյակը հարցի առնչությամբ հաղորդագրություն տարածել էր երկրորդ կեսին, քանի որ փորձում էինք հասկանալ՝ինչ իրավիճակ է, նրանց իրավունքներին վերաբերելի մի շարք հարցեր ենք ուղղել, քանի որ քաղաքացիները, միգուցե, չպատկերացնեն, որ իրենց իրավունքը խախտվել է, բայց իրավիճակը նկարագրելով՝ մենք հնարավորություն կունենանք եզրահանգումներ անելու: Այս դեպքում էլ, ինչպես մյուս սահմանային միջադեպերի, մենք ունեցել ենք իրավիճակ, երբ այս ամենի արդյունքում մարդկանց իրավունքները խախտվել են. մարդիկ սթրեսային իրավիճակում են հայտնվել, այս ամենի արդյունքում խախտվել են ինչպես մարդկանց անվտանգության, կյանքի եւ կրթության իրավունքը, այլեւ մնացյալ իրավունքներ»,- ասաց նա: Սահմանային սադրանքներին զուգահեռ՝ Ադրբեջանի նախագահը նաեւ տարածքային նոր նկրտումներ է ներկայացնում Հայաստանի նկատմամբ՝ հայտարարելով, թե հայկական մի շարք գյուղեր Ադրբեջանին են պատկանում: Սահմանամերձ գյուղերի բնակիչների շրջանում Ադրբեջանի նախագահի այս հայտարարությունները խուճապ են առաջացնում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ մարդիկ լքում են իրենց բնակավայրերը՝թողնելով իրենց տունը: Արդյոք սրանք եւս մարդու իրավունքների խախտումներ չե՞ն, ի՞նչ դիրքորոշում ունի ՄԻՊ-ն այս առնչությամբ. «Ես՝ որպես մարդու իրավունքների պաշտպան, ինչպես նաեւ որպես մարդու իրավունքների պաշտպանության հաստատությունները միավորող միջազգային կառույցների անդամ, ուզում եմ հատուկ արձանագրել, որ պաշտոնատար անձինք պարտավոր են պահպանել այն սկզբունքները, որոնք առկա են մարդու իրավունքների տեսանկյունից, իսկ այդ տեսանկյունից ատելության խոսքը, ագրեսիա հրահրող խոսքն ընդունելի չէ»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի ԱԺ պատգամավորները մտադիր են առաջիկայում ԱԺ նիստ հրավիրել: Արցախի պատգամավորների շրջանում արդեն իսկ կոնսենսուս կա այս մասին, իսկ թե երբ տեղի կունենա նիստը, դեռ հստակեցված չէ. քննարկումներ են գնում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ օրակարգային հիմնական հարցը ԱԺ քննիչ հանձնաժողով ստեղծելու հարցն է լինելու, ինչի մասին «Ժողովուրդ» օրաթերթը դեռ փետրվարի 2-ին էր գրել: Գրել էինք, որ 2023թ.-ի մարտից արցախցիների աշխատավարձերից պահվող գումարները չեն փոխանցվել կենսաթոշակների կուտակային ֆոնդին, այլ ուղղվել են անհայտ ինչ-որ ծախսերի: Ահա այս առիթով Արցախի պատգամավորները մտադիր են քննիչ հանձնաժողով ստեղծել, որպեսզի պարզեն՝ ինչին են ուղղվել քաղաքացիների կուտակային գումարները, եւ ով է դրա պատասխանատուն: Քննիչ հանձնաժողովի հարցն առաջիկայում կայանալիք նիստին կքննարկվի:

ՀՀ պետական պահպանության ծառայությունը եւ ՀՀ վարչապետի աշխատակազմը միասին գնել են 1 մլն 538 հազար 564 դրամ արժողությամբ աթոռներ: ՀՀ ՊՊԾ-ն ձեռք է բերել Samba ֆիրմայի գրասենյակային 16 աթոռ, որն արժեցել է 638 հազար 720 դրամ: ՀՀ վարչապետի աշխատակազմը ձեռք է բերել Foshan Mike Dowell ֆիրմայի 30 աթոռ, որն արժեցել է 899 հազար 844 դրամ: Աթոռները մատակարարվել են «Լեվան» ՍՊԸ-ի եւ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից: Գերատեսչությունները ներկայացրել են հստակ սահմանված բնութագիր եւ գնման առարկայի համար նախատեսված պահանջներ: ՀՀ պետական պահպանության ծառայությունը սահմանել է, որ նստատեղի լայնությունը 45սմ պետք է լինի, խորությունը մինչեւ թիկնակ՝ 43սմ, թիկնակի բարձրությունը նստատեղից՝49սմ, հատակից մինչեւ նստատեղ բարձրությունը՝42սմ, աթոռի ընդհանուր բարձրությունը հատակից մինչեւ թիկնակի վերին հատվածը՝89 սմ: Վարչապետի աշխատակազմի պահանջներն ավելի թանկ են եւ հարմարավետ՝ գույնը՝ սեւ, շարժական, մետաղական հիմքով, պաստառապատված կտորով, պլաստմասե արմնկակալով, բռնակներով, պտտվող, նստատեղը եւ թիկնակը՝ սպունգապատ, 30մմ հաստությամբ, հինգ անիվների վրա, նստատեղը՝ տարբեր դիրքերում ֆիքսելու հնարավորությամբ, նստատեղը՝ բարձրացվող-իջեցվող, նստատեղի լայնությունը՝49սմ, խորությունը՝50սմ, մեջքի հատվածի լայնությունը՝50սմ, իսկ մեջքի բարձրությունը՝52սմ: Ստացվում է, որ հնարավոր է տարբերակել, թե որ կառույցի բյուջեն որքան ճոխություն կարող է թույլ տալ սեփական աշխատակիցներին:



Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024 թվականի հունվարի 24-ին պայմանագիր է կնքել «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի հետ: Պայմանագրի արժեքը կազմել է 80 մլն 244 հազար դրամ, որի գնման առարկան եղել է Արբանյակի վարձակալությունը, իսկ արժեքի 13 մլն 374 հազար դրամը Ավելացված արժեքը հարկն է: Բացատրենք, թե ինչ է սա իրենից ենթադրում. պայմանագրում նշված գնման առարկայի տեխնիկական բնութագրի համաձայն՝ այն Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալության ծառայություններ է ենթադրում: Այս պայմանագրի նպատակը հետեւյալն է. «ՀՀ սեփականությունը համարվող թվային հեռարձակման ցանցը բաղկացած է թվով 213 հեռուստակայանից, որոնցից 66-ում հանրապետական սփռման մուլտիպլեքսի (որը պետք է հեռարձակվի հանրապետության բնակավայրերի 100%-ում) հաղորդումը իրականացվում է օպտիկամանրաթելային համակարգով, իսկ թվով 147-ում՝ արբանյակային հեռարձակման ցանցի միջոցով»: Արբանյակային հեռարձակումը ծառայում է նաեւ բնակավայրերից դուրս տեղակայված առանձնատների, հանգստյան գոտիների, զորամասերի եւ այլնի համար որպես պետական սփռման մուլտիպլեքսի ֆիքսված անհատական արբանյակային ընդունման հիմնական միջոց: Արբանյակի մոդելը EutelSat 708 է, իսկ գնումը կատարված է մեկ անձից գնման եղանակով: Այսինքն՝ ստացվում է, որ ամբողջ հանրապետության տարածքում արբանյակային սփռման արժեքը 80 մլն 244 հազար դրամ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶՐՈՒՅՑ

ԱՅԼԵՎՍ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆԻ

Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ օրեր առաջ կառավարությունում տեղի էր ունեցել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստ: Օրակարգում ընդգրկված է եղել ավագանու անդամի կողմից այլ հանրային պաշտոն զբաղեցնելու սահմանափակումների վերաբերյալ հարցը. խոսքը ՔՊ-ական ավագանու 4 անդամների մասին է:

Ի՞նչ է սպասվում անհամատեղելիության կարգով այլ պաշտոն զբաղեցնող ավագանու անդամներին, ի՞նչ է որոշել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը:

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը ArmLur.am-ի հետ զրույցում մանրամասներ է հայտնում:

-Պարոն Մինասյան, Հակակոռուպցիոն քաղաքական խորհուրդը հերթական նիստը արեց. օրակարգում ավագանու այն անդամների հարցն էր, որոնք անհամատեղելիության սկզբունքով նաեւ հանրային ծառայողի պաշտոն են զբաղեցնում: Հաղորդագրությունից պարզ է դառնում, որ ավագանու տվյալ անդամները կշարունակեն պաշտոնավարել, մինչեւ համապատասխան օրենքներում փոփոխություններ լինեն, եւ նոր օրենքը կտարածվի արդեն նոր ձեւավորվող ավագանու վրա: Կխնդրեմ մեկնաբանել՝ ինչ է սա նշանակում:

-Ինչպես գիտեք, կա ֆորմատ՝Հակակոռուպցիոն մշտադիտարկման խորհրդի նիստ: Այս անգամ նիստին մեկ օրակարգային հարց էր. խնդիր է առաջացել տարբեր օրենքներում, մասնավորապես՝«Հանրային ծառայության մասին» օրենքում, ՏԻՄ օրենքում եւ «Երեւանի մասին» օրենքում: Կարգավորումները շատ խառն են ձեւակերպված, եւ այդ է պատճառը, որ իրավաբանների մի մասը գտնում է, որ, այո, ավագանին իրավունք ունի համատեղել, նաեւ կա դրա միջազգային փորձը, բայց մեծամասնությունը գտնում էր, որ համատեղությունը սխալ է, եւ ավագանու կազմում չպետք է լինեն պետական ծառայողներ: Երեկ տեղի ունեցած քվեարկության արդյունքում որոշում կայացվեց, որ օրենսդրությունը այնպես բարեփոխվի, որ այլեւս համատեղելիություն չլինի, այսինքն՝ այդ տարընկալումը չլինի, հստակեցվի, որ հանրային ծառայողը կարող է լինել ավագանու անդամ, իսկ ավագանու անդամը չի կարող եւ այլն: Ամենը պետք է հստակեցվի, եւ քանի որ կան ավագանու բազմաթիվ անդամներ, որոնք այսօր հանրային ծառայող են, որոշում կայացվեց, որ օրենքը ուժի մեջ մտնի հենց այն համայնքներում, որտեղ կլինեն նոր ընտրություններ: Սա նախնական դիրքորոշում է. նախագիծը կկազմենք, այնուհետեւ կառավարությունը կհաստատի, եւ վերջում, բնականաբար, Ազգային ժողովն է որոշելու գլոբալ օրենքի ճակատագիրը:

-Ե՞րբ է նախարարությունը սկսելու գործընթացը:

-Մենք այսօրվանից սկսել ենք, երկու շաբաթվա ընթացքում կունենանք նախագիծ, կուղարկենք նախարարական կոմիտե, որը հաստատելուց հետո արդեն կգնա կառավարության նիստ: Ունենք վարչապետի հանձնարարականը, մշտադիտարկման խորհրդի առաջարկը, որպեսզի հնարավորինս շուտ դա տեղի ունենա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑՈՎ

Բուլղարիան ողջունում է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը եւ պատրաստ է աջակցել Հայաստանին տարածաշրջանում խաղաղության հաստատման հարցում: Ինչպես հայտնում են Հայաստանի Ազգային ժողովից, այս մասին հայտնել է Բուլղարիայի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ռոսեն Ժելյազկովը պաշտոնական այցով Բուլղարիայում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ հանդիպմանը:

Պաշտոնական այցով Բուլղարիայում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը փետրվարի 15-ին հանդիպել է Բուլղարիայի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ռոսեն Ժելյազկովի եւ Բուլղարիայի խորհրդարանականների հետ:

Հանդիպումը մեկնարկել է խորհրդարանների ղեկավարների առանձնազրույցով, որին հաջորդել է ընդլայնված կազմով հանդիպումը:

Կողմերը փաստել են Հայաստանի եւ Բուլղարիայի միջեւ առկա սերտ հարաբերությունների մասին՝ ընդգծելով, որ դրանք հիմնված են երկու ժողովուրդների միջեւ պատմականորեն ձեւավորված բարեկամության, ընդհանուր արժեքների եւ մշակութային կապերի վրա:

Ալեն Սիմոնյանը, ողջունելով Բուլղարիայի ԱԺ նախագահին, շնորհակալություն է հայտնել հանդիպման հրավերի եւ ջերմ ընդունելության համար:

Հայաստանի խորհրդարանի ղեկավարը նշել է, որ Հայաստան-Բուլղարիա երկկողմ միջպետական հարաբերություններում նշանակալի դեր ունեն միջխորհրդարանական կապերը, որոնց խթանումը եւ շարունակական զարգացումը կարեւոր են Հայաստանի համար:

«Բարձր մակարդակի կանոնավոր միջխորհրդարանական երկխոսությունը մեծ ներուժ կլինի Հայաստան-Բուլղարիա հարաբերությունների զարգացման եւ ընդլայնման հարցում: Մենք պետք է խթանենք ուսանողների երկկողմ փոխանակումների գործընթացը եւ բարեկամական խմբերի գործունեությունը»,- ասել է Ալեն Սիմոնյանը:

Ռոսեն Ժելյազկովն անդրադարձել է Բուլղարիայի հայ համայնքին, որը մեծ ներդրում ունի հայ եւ բուլղար ժողովուրդների եղբայրական հարաբերությունների հաստատման գործում: Նա նաեւ կարեւորել է հայ-բուլղարական առեւտրատնտեսական պալատի, միջկառավարական հանձնաժողովի եւ խորհրդարանական բարեկամական խմբերի գործունեությունը:

Անդրադառնալով տարածաշրջանային իրավիճակին՝ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը կարեւորել է Բուլղարիայի ներգրավվածությունը եւ աջակցությունը Հայաստանի կառավարության կողմից առաջ բերված «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին, մասնավորապես՝ Հայաստան-Ադրբեջան բանակցությունների կարգավորման եւ տարածաշրջանում անվտանգության ու խաղաղության հաստատման համատեքստում:

«Բուլղարիան ողջունում է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը եւ պատրաստ է աջակցել Հայաստանին տարածաշրջանում խաղաղության հաստատման հարցում»,- նշել է Բուլղարիայի խորհրդարանի ղեկավարը:

Կողմերը մտքեր են փոխանակել Հայաստան-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման, երկկողմ եւ բազմակողմ առեւտրատնտեսական եւ մշակութային համագործակցության շուրջ:

Հանդիպման ավարտին Ալեն Սիմոնյանը գրառում է կատարել Պատվավոր հյուրերի գրքում, շրջայց կատարել Բուլղարիայի Հանրապետության Ազգային ժողովում:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼԵԳԻՏԻՄ ԻՐԱՎՈՒՆՔ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն արձագանքեց Ադրբեջանի մեղադրանքներին՝ Հայաստանի կողմից սպառազինություն ձեռք բերելու վերաբերյալ:

«Ադրբեջանը շարունակում է սպառնալից հռետորաբանությունը նաեւ մեր բանակի բարեփոխումների եւ Հայաստանի Հանրապետության կողմից սպառազինություն եւ տեխնիկա ձեռք բերելու կապակցությամբ: Բայց, ինչպես ասել եմ սույն թվականի հունվարի 28-ին՝ Բանակի օրվա առիթով, ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալը յուրաքանչյուր երկրի լեգիտիմ իրավունքն է: Սա որեւէ մեկը չի կարող ժխտել: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է հարեւան բոլոր երկրների տարածքային ամբողջականությունը եւ սեփական տարածքից դուրս նպատակներ չունի: Սա, ի դեպ, մեր երկարաժամկետ ռազմավարությունն է, որովհետեւ, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու համար կարեւորագույն կոմպոնենտ է լեգիտիմությունը: Հայաստանի Հանրապետությունը պաշտպանության ոլորտում ունի միայն լեգիտիմ նպատակներ, այն է՝ միջազգայնորեն ճանաչված իր տարածքների պաշտպանությունը»,- կառավարության նիստի ժամանակ ասաց Փաշինյանը՝ հավելելով, որ նման նպատակ ունենալու մեջ որեւէ երկիր որեւէ այլ երկրի երբեւէ չի կարող մեղադրել:

ՇԵՆՔԸ՝ ԱՐԺԵՔ

Հայաստանը կգնի Փարիզի 16-րդ թաղամասում տեղակայված Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության 3-րդ նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենին պատկանող շենքը ՀՀ դեսպանատունն այնտեղ տեղակայելու նպատակով: Հարցը Հայաստանի կառավարության փետրվարի 15-ի նիստի օրակարգում է:

Նշվում է, որ նախագծի ընդունումը պայմանավորված է Ֆրանսիայի Հանրապետությունում ՀՀ դեսպանության շենք ձեռք բերելու անհրաժեշտությամբ:

«Առաջարկվող շինությունը տեղակայված է Փարիզի 16-րդ թաղամասում, ունի պատմական արժեք, քանի որ 1956 թվականից այն պատկանել է Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության 3-րդ նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենին: Ֆրանսիայում ՀՀ դեսպանության երկարատեւ բանակցությունների արդյունքում վաճառող կողմը համաձայնել է վաճառել այն 23 միլիոն եվրոյի դիմաց, մինչդեռ հեղինակավոր գնահատող կազմակերպությունների գնահատականների համաձայն՝ շինության իրական արժեքը զգալիորեն գերազանցում է այդ գումարը:

Կողմերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝վաճառքի մտադրության մասին համաձայնագիրը ստորագրելու պահին հայկական կողմը, ըստ գործող ընթացակարգի, պետք է փոխանցի կանխավճար՝ ընդհանուր գումարի 10 տոկոսի չափով»,-նշված է նախագծի հիմնավորման մեջ:

Նախագծով առաջարկվում է շենքը ձեռք բերելու համար նախատեսված գումարի կանխավճարի տրամադրում, ուստի առաջարկվում է ՀՀ արտաքին գործերի նախարարությանը 2024 թվականի պետական բյուջեի Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին հատկացնել 2 միլիոն 300 հազար եվրոյին համարժեք դրամ:

ԴԵՄ՝ ԴՐՍԻ ՈՒԺԵՐԻՆ

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռաիսին ողջունել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության բանակցությունները՝ հայտնելով Իրանի պատրաստակամությունը՝ ապահովելու կովկասյան տարածաշրջանի ռազմավարական անվտանգությունը՝ հաշվի առնելով այդ առումով Իսլամական Իսլամական Հանրապետության կարմիր գծերը:

Ինչպես հայտնում է IRNA-ն, Ռաիսին այս մասին ասել է Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի հետ հանդիպմանը:

Անդրադառնալով Հարավային Կովկասի իրավիճակին՝ Ռաիսին ասել է, որ Իրանը կարեւորում է տարածաշրջանում կայունության եւ անվտանգության պահպանումը:

Ռաիսին նշել է, որ Իրանը դեմ է տարածաշրջանում դրսի ներկայությանը՝ հավելելով, որ արտաքին ուժերի ներգրավվածությունը տարածաշրջանային խնդիրներին ոչ միայն լուծումներ չի տալիս, այլ նաեւ ավելի լուրջ մարտահրավերներ է բերում:

Իրանի նախագահը Թեհրանի եւ Երեւանի հարաբերությունները բնութագրել է որպես պատմական, բարեկամական եւ կառուցողական:

Նա իր աջակցությունն է հայտնել Թեհրանի եւ Երեւանի միջեւ բոլոր պայմանավորվածությունների լիարժեք իրականացմանը՝ ասելով, որ կոնկրետ պայմանավորվածությունների իրագործումը ջանքեր է պահանջում, եւ երկու երկրների տնտեսական հարցերով համատեղ հանձնաժողովը պետք է դրանց հետամուտ լինի:

ԿՄԱՄՆԱԿՑԻ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հաստատել է մասնակցությունը Բրյուսելում կայանալիք ատոմային էներգետիկային նվիրված գագաթնաժողովին:

Այս մասին ասել է Հայաստանում Բելգիայի դեսպան Էրիկ դե Մույնքը:

«Մարտի 21-ին Բրյուսելում ատոմային էներգետիկային նվիրված գագաթնաժողով է կազմակերպվում, որին իր մասնակցությունն արդեն հաստատել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա այդ ժամանակ կլինի Բրյուսելում եւ հնարավորություն կունենա հանդիպել Բելգիայի իշխանությունների ներկայացուցիչների հետ»,- ասել է դեսպանը՝ անդրադառնալով Հայաստանի եւ Բելգիայի միջեւ առաջիկա բարձրաստիճան այցերի մասին հարցին:

Ատոմային էներգետիկային նվիրված գագաթնաժողովն անցկացվելու է Բրյուսելում մարտի 21-22-ը: Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալությունը հայտնում է, որ սա լինելու է ատոմային էներգետիկային նվիրված երբեւէ առաջին գագաթնաժողովը: Գագաթնաժողովը համախմբելու է աշխարհի տարբեր երկրների առաջնորդների՝ ընդգծելու ատոմային էներգետիկայի դերը գլոբալ խնդիրները լուծելու հարցում: Գագաթնաժողովը համանախագահելու են Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսին եւ Բելգիայի վարչապետ Ալեքսանդր Դե Կրոն:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՉԷ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Ադրբեջանն ամեն կերպ խուսափում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման վերաբերյալ առաջարկվող տարբերակներից: Վարչապետի խոսքով՝ դրա պատճառ կարող է լինել սահմանի որոշ հատվածներում ռազմական գործողություններ սկսելու Ադրբեջանի մտադրությունը՝ հետագայում դա Հայաստանի դեմ լայնածավալ պատերազմի վերածելու հեռանկարով:

Փաշինյանն այս մասին ասել է ՀՀ կառավարության նիստի ժամանակ ունեցած ելույթում:

«Նկատել եք, որ Ադրբեջանը պարբերաբար խոսում է, ինչպես ինքն է ձեւակերպում, 4 գյուղերի տարածքների մասին, միեւնույն ժամանակ հրաժարվելով ընդունել, որ ադրբեջանական օկուպացիայի տակ են գտնվում Հայաստանի Հանրապետության 31 ոչ անկլավային գյուղերի կենսական նշանակության տարածքներ: Այս իրավիճակին մեր դիրքորոշումը խիստ կառուցողական է: Մենք ասում ենք, որ, որպեսզի զորքերը իրենց դիրքերից հետ գնան, դրա համար անհրաժեշտ է քարտեզի եւ գետնի վրա վերարտադրել Հայաստան-Ադրբեջան սահմանը եւ երկու երկրների զորքերը հետ քաշել այդ սահմանի գծի նկատմամբ: Այսինքն՝ սահմանի վերարտադրությունից հետո, եթե պարզվի, որ այդ գծից առաջ զորքեր կան, դրանք երկուստեք պետք է հետ քաշվեն այդ արդեն իսկ սահմանագծված սահմանի նկատմամբ: Պաշտոնական Բաքուն փորձում է այս իրադարձությունը ձեւակերպել այնպես, որ ադրբեջանական զորքերը Հայաստանի 31 գյուղերի տարածքներից որեւէ կերպ հետ չգնան: Սա կառուցողական դիրքորոշում չէ»,- ընդգծեց Փաշինյանը:

Վարչապետը կրկին վերահաստատեց Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը գնալ կոնկրետ լուծումների, որոնց սկզբունքներն արդեն իսկ պայմանավորված են: Նա ներկայացրեց, թե ինչ սկզբունքների մասին է խոսքը:

«Խոսքը միջազգային հարթակներում գրավոր կերպով եւ հրապարակային արձանագրված պայմանավորվածության մասին է, որ Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչում են 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, եւ Ալմա-Աթայի հռչակագիրը պետք է լինի սահմանազատման գործընթացի քաղաքական հիմքը: Սա նշանակում է, որ մեզ մնացել է տեխնիկական աշխատանք՝ քարտեզների եւ գետնի վրա վերարտադրել հայկական եւ ադրբեջանական ԽՍՀ-ների միջեւ 1991 դրությամբ դե-յուրե առկա սահմանը եւ դրանց իրավական հիմքերը վերհանելու միջոցով լուծել հարցը:

Նույն սկզբունքով պետք է հասցեագրել նաեւ այսպես կոչված էքսկլավ/անկլավների հարցը: Օրինակ՝ Արծվաշենի տարածքը որոշելու համար պետք է իրավական փաստաթղթերի հիման վրա գծել եւ հետագա բանակցությունների արդյունքում որեւէ բանաձեւով լուծել նաեւ այդ հարցը:

Ադրբեջանը պարբերաբար խուսափում է գնալ նման լուծումների՝ փորձ անելով գնալ տեղայնացման ճանապարհով: Մենք համաձայն ենք նույնիսկ այս տարբերակին եւ սահմանագծում իրականացնել մարզ առ մարզ՝ ամեն հատվածում վերարտադրելով սահմանը, ապա իրականացնել զորքերի դիրքավորման ճշգրտում՝ ըստ վերարտադրված սահմանագծի, եւ անցնել հաջորդ հատվածին, իսկ էքսկլավային հարցերը թողնել ամենավերջին փուլին: Այսինքն՝ կա երկու տարբերակ՝ նախ ամբողջ սահմանի գծով իրականացնում ենք սահմանագծում եւ անցնում դրա իրագործմանը, իսկ երկրորդը՝ կտորների ենք բաժանում սահմանը եւ կտոր-կտոր սահմանագծելով գնում ենք առաջ: Մենք երկու տարբերակին էլ համաձայն ենք՝ վերը նշված սկզբունքների համաձայն:

Բայց Ադրբեջանը, կարծես թե, խուսափում է նաեւ այս տարբերակից: Նաեւ մեր վերլուծությունը ցույց է տալիս, թե սրա համար կարող է լինել մեկ պատճառ, եւ այդ պատճառը կարող է լինել ռազմական գործողություններ սկսելը սահմանի որոշ հատվածներում՝ հետագայում ռազմական էսկալացիան Հայաստանի Հանրապետության դեմ լայնածավալ պատերազմի վերածելու հեռանկարով:

Այս մտադրությունը ընթերցվում է պաշտոնական Բաքվից հնչող բոլոր հայտարարություններում ու գործողություններում»,- ընդգծեց Փաշինյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը փետրվարի 14-ին հանդիպումներ է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալներ Մեհդի Սաֆարիի եւ Ալի Բաղեր Քանիի հետ:

ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը եւ ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Մեհդի Սաֆարին մտքեր են փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, այդ թվում՝ տնտեսական, ենթակառուցվածքների, էներգետիկայի եւ այլ բնագավառներում երկու երկրների համագործակցությանը վերաբերող հարցերին: Կողմերը ընդգծել են երկու երկրների գործարար միջավայրի ներկայացուցիչների պարբերական շփումների, համատեղ ներդրումային ծրագրերի ընդլայնման անհրաժեշտությունը: Ընդգծվել է Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի՝ իրանական ընկերությունների կողմից նախանշված ժամկետներում կառուցման կարեւորությունը: Նախարարի տեղակալն իրանցի գործընկերոջն է ներկայացրել «Խաղաղության խաչմերուկ» նախագծի մանրամասները:

Ըստ աղբյուրի՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը եւ ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Ալի Բաղերի Քանին քննարկել են տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր: Հայկական կողմը ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերություններում առկա գործընթացները: Այս առնչությամբ բարձր է գնահատվել Իրանի ղեկավարության քանիցս արտահայտած դիրքորոշումը՝ Հայաստանի տարածքային ամբողջականության եւ սահմանների անքակտելիության վերաբերյալ:

Նշվում է, որ հանդիպմանն անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստանի եւ Իրանի արտաքին քաղաքական առաջնահերթություններին, դրանց համադրման եւ փոխշահավետ գործակցության շարունակականության ապահովման կարեւորությանը:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԵՂԾ ԱՐՏԱՐԺՈՒՅԹ

ՍԽԵՄԱՏԻԿ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Բացահայտվել է մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իրացնելու նպատակով խոշոր չափերով կեղծ արտարժույթ ձեռք բերելու, պահելու եւ տեղափոխելու սխեմատիկ հանցագործության դեպք:

Այս մասին հայտնում են Քննչական կոմիտեից՝ նշելով, որ քրեական վարույթի նախաքննությամբ պարզվել է՝ Երեւան քաղաքի բնակիչը իրացնելու նպատակով համաքաղաքացուց ձեռք է բերել եւ պահել խոշոր չափերով՝ 300 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամին նման եւ իսկականից ակնհայտորեն չտարբերվող թղթադրամներ, այսինքն՝ կեղծ արտարժույթ, դրանք, ըստ նախնական տվյալների, իրացրել է Հայաստանի տարբեր մարզերում եւ համայնքներում՝ հիմնականում բնամթերք գնելով, ինչի հետեւանքով տուժել են ՀՀ տարբեր մարզերի բազմաթիվ քաղաքացիներ:

Այդ նպատակով վերջինս պայմանավորվել է ուղեւորափոխադրումներ իրականացնող իր ծանոթի եւ վերջինիս կնոջ հետ՝ հանցանքը համատեղ կատարելու, այն է՝ գնումներ կատարելու եղանակով հիշյալ կեղծ թղթադրամները շրջանառության մեջ դնելու, կեղծ արտարժույթն իրացնելու շուրջ եւ 2024թ. փետրվարի 7-ին կեղծ արտարժույթը հիշյալ անձի կողմից վարած ավտոմեքենայով տեղափոխել Վայոց ձորի մարզ:

Նույն օրը Ջերմուկ քաղաքի շուկայում գնումներ կատարելու եղանակով, 7 հատ 100 ԱՄՆ կեղծ թղթադրամներ իրացնելով վաճառողներին, դրանք դրել են շրջանառության մեջ: Օրեր անց կրկին փորձել են գնումներ կատարելու եղանակով կեղծ թղթադրամներն իրացնել, սակայն ոստիկանության պարեկային ծառայության Վայոց ձորի մարզի գումարտակի ծառայողների կողմից ուղեւորափոխադրում կատարող անձը, իր կողմից վարվող ավտոմեքենայով հանդերձ, տեղափոխվել է Ոստիկանության Եղեգնաձորի բաժին, որտեղ կատարված անձնական խուզարկությամբ եւ տրանսպորտային միջոցի զննությամբ հայտնաբերվել եւ վերցվել է 11 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով կեղծ արտարժույթ, եւս 46 հատ՝ բնակարանի խուզարկությամբ:

Նախաքննության շրջանակներում կատարվել են վարութային եւ ապացուցողական անհետաձգելի գործողություններ՝ հարցաքննություններ, խուզարկություններ, զննություններ, վարույթի համար կարեւոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների պարզաբանման նպատակով նշանակվել են փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Երեւան քաղաքի բնակիչներ ամուսիններին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ուղեւորափոխադրում իրականացնող անձին՝ 267-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ կեղծ թղթադրամները համաքաղաքացուն իրացրած անձին՝ 267-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Միջնորդություններ են հարուցվել դատարան՝ 4 մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ: Դատարանի որոշմամբ նրանցից 3-ի՝ կեղծ թղթադրամները ձեռք բերած, իրացրած, ինչպես նաեւ ուղեւորափոխադրում իրականացնող անձանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանք, իսկ Երեւանի բնակչի կնոջ նկատմամբ՝ տնային կալանք:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ կեղծ թղթադրամները պատրաստած, հանցավոր շղթայում հնարավոր ներգրավվածություն ունեցող անձի (անձանց) ինքնությունը, հանցավոր խմբի կողմից առերեւույթ կեղծ թղթադրամների իրացումից տուժած բազմաթիվ անձանց շրջանակը պարզելու նպատակով:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՈՐԹՈՒՄ

ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆ «ԻՐԵՆՈՎ Է ԱՐԵԼ»

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Տարոնի բաժնում շորթում կատարելու հատկանիշներով փաստաթղթեր են կազմվել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Վանաձոր քաղաքում գործող համատիրություններից մեկի նախագահը կատարում է չարաշահումներ:

Մասնավորապես՝ աշխատակիցներին ցածր աշխատավարձ նշելով՝ բնակիչների կողմից վճարված գումարները չի ծառայեցնում նպատակին, համատիրության մատյաններում նշված գործիքները, որոնք ձեռք է բերել համայնքի բնակիչների կողմից հավաքած գումարով համայնքում շինաշխատանքներ կատարելու նպատակով, գոյություն չունեն:

Նույն օրը քրեական հետախուզության բաժանմունքում օպերլիազորը լրացուցիչ օպերատիվ տեղեկություն է ստանում, ապա հանցագործության հայտնաբերման եւ բացահայտման ուղղությամբ, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, լրացուցիչ տեղեկություններ է ստացել, որ այդ համատիրության նախկին աշխատակիցը, օգտվելով նշված համատիրության նախագահի հետ ինչ-ինչ հարաբերություններ ունենալու հանգամանքից, պարբերաբար սպառնացել է նրան եւ վերջինից շորթել է, որն էլ համատիրության բնակիչների կողմից հավաքված եւ բնակիչների կարիքների համար նախատեսված մոտ 1 մլն 350 հազար դրամ գումարը «իրենով է արել»:

Ըստ տեղեկությունների՝ ոստիկաններն արդեն լսել են համատիրության նախագահին եւ կազմված փաստաթղթերն էլ փոխանցել են Հայաստանի Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԴԱՐԱՑՎԵՑ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԱՀԱՆՋ ԷՐ

«Այս տարի վերջապես դատավոր Բորիս Բախշիյանը վերականգնվեց դատավորի պաշտոնում, իսկ դատախազությունը պաշտոնապես ներողություն խնդրեց դատավորից նրան անհիմն մեղադրելու համար»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է գործով փաստաբան Արսեն Սարդարյանը:

«Այս ծանր դեպքը, երբ դատավորին ակնհայտ անհիմն մեղադրանքով ոչ միայն զրկեցին անձեռնմխելիությունից, այլեւ նույնիսկ կալանավորեցին, իսկ հետագայում դատախազության ներկայացուցիչը սկսեց լրատվական դաշտում ամեն գնով սեւացնել օբյեկտիվ եւ արդար աշխատած դատավորին, իրավունքի լուրջ նահանջ էր եւ լուրջ հարված դատական իշխանությանը:

Հուսանք, որ ներողությունը զուտ ձեւական չէ, եւ ՀՀ դատախազությունը, քննչական մարմինը եւ երեւույթին բացասական առումով առնչված գիտնականներն ու դատավորները կանեն անհրաժեշտ հետեւություններ»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ Ազգային անվտանգության քննչական դեպարտամենտում քննված քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ՝ 2022 թվականի մայիսի 18-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշիյանին մեղադրանք է ներկայացվել՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածի 2-րդ մասով (ակնհայտ ապօրինի կալանավորելը կամ ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելը): 2022 թվականի մայիսի 20-ին վարույթից անջատվել է Բորիս Բախշիյանի վերաբերյալ քրեական վարույթը եւ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով՝ Բորիս Բախշիյանը ներկայացված մեղադրանքում ճանաչվել է անմեղ, արդարացվել է: 2022 թվականի նոյեմբերի 16-ին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է 2023 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ:

2023 թվականի հուլիսի 27-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը, Վճռաբեկ դատարանի որոշմամբ, վարույթ չի ընդունվել: Քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ քրեական հետապնդում հարուցած մարմինը ներողություն է հայցում Բորիս Հրանտի Բախշիյանից:

Հիշեցնենք, որ Բորիս Բախշիյանն իր մասնակցությունն էր ունեցել «Ուշացող արդարադատություն ու դատական կոռուպցիա. երբ ու ոնց կլինի դրա վերջը» վերտառությամբ, 8 միլիոն դրամ արժողությամբ վավերագրական ֆիլմում, որը դիֆերամբ էր առ Կարեն Անդրեասյանի ղեկավարած ԲԴԽ-ն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 14-ից 15-ը ՀՀՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 88 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի» կողմից պատրաստված kadrer.emis.am ինտերնետային կայքում տեղադրված են տեղեկություններ Հայաստանի մարզերի հանրակրթական դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերի, այդ տեղը զբաղեցնողների համար նախատեսված դասաժամերի քանակի եւ վարձատրության չափի մասին: Կայքի վերին մասում գրված է՝ «Հայաստանի Հանրապետության մարզեր ուսուցիչների գործուղման համակարգ»: Ըստ այդ կայքի՝ ներկայումս ՀՀ մարզերի դպրոցներում թափուր է ուսուցիչների 605 հաստիք: Հայաստանի մարզերում ուսուցիչների թափուր հաստիքների թիվն իրականում ավելի մեծ է: Մարզերի հանրակրթական դպրոցներում թափուր այդ 605 հաստիքներից 8-ը Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում են: Բերդ համայնքի Վարագավանի միջնակարգ դպրոցում թափուր է ֆիզկուլտուրայի ուսուցչի հաստիք, Բերդ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցում՝ ֆիզկուլտուրայի ուսուցչի 2 հաստիք, որից մեկը՝ կես դրույք կազմող աշխատավարձով: Ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր հաստիքներ կան նաեւ Իջեւան համայնքի Լուսահովտի հիմնական, Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, անգլերենի ուսուցչի 2 թափուր հաստիք կա Բերդ համայնքի Մովսեսի միջնակարգ դպրոցում, այդ 2 հաստիքներից մեկը կես դրույք աշխատավարձով է, աշխարհագրության ուսուցչի թափուր հաստիք կա Դիլիջան համայնքի Գոշ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Իրականում Տավուշի մարզում ուսուցիչների թափուր հաստիքներն ավելի շատ են: Մարզի հանրակրթական շատ դպրոցների տնօրեններ ուսուցիչների թափուր հաստիքները զբաղեցնելու վերաբերյալ հայտարարություններ չեն տալիս, այլ դրանք լրացնում են այլ առարկաների ուսուցիչներով:

ՄՐՑՈՒՅԹ ԿԼԻՆԻ՞

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե 2024 թվականին Տավուշի մարզում միասնական երթուղային ցանցի ներդրման համար ինչ աշխատանքներ են նախատեսված: Մարզպետարանի պատասխանում նշված է. «ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը 2024 թվականի ընթացքում նախատեսում է հայտարարել Տավուշի միջմարզային եւ ներմարզային միասնական երթուղային ցանցերը սպասարկող կազմակերպությունների ընտրության մրցույթները, որի շրջանակներում ամբողջությամբ կապահովվի՝ ա/ Իջեւան - Երեւան, Իջեւան - Վանաձոր, Դիլիջան - Երեւան, Դիլիջան - Վանաձոր, Նոյեմբերյան - Երեւան, Նոյեմբերյան - Վանաձոր, Բերդ - Երեւան, Բերդ - Վանաձոր միջմարզային երթուղիների կանոնավոր սպասարկումը»: Ժամանակը ցույց կտա, թե այդ մրցույթները կկայանան, կունենան հաղթողներ, նշված երթուղիները կսպասարկվեն արդյոք:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

ՊԵՏՔ Է ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՅՆՔ ԱՆՑՆԵԼ...

Հայաստանի Հանրապետության 4 համայնքներում 500 միլիոն դրամի չափով մասնակցային բյուջեավորմամբ ձեւավորված սուբվենցիաների փորձնական ծրագիրը նախապատրաստական փուլում է:

Այս մասին հայտնեց Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը՝ հավելելով, որ բյուջեում համապատասխան հատկացումն արդեն արված է, եւ նախապայման է դրված նույն բյուջետային տարվա ընթացքում ավարտել այդ ծրագրերը:

«Իրականության մեջ մեր սուբվենցիոն ծրագրերը մասնակցային բաղադրիչ են: Որպես կանոն, համայնքներն այս ծրագրերը պետք է մեզ ուղարկեն այն դեպքում, երբ համայնքում հանրային լսումների նման քննարկումներ են տեղի ունեցել, եւ, այսպես ասած, կազմվել է համայնքի տվյալ տարվա բյուջեին բնորոշ այն աշխատանքների կամ անելիքների ցանկը, որոնք այդ քննարկումների արդյունքում որոշվել է: Այսինքն՝ պետք է համայնք-համայնք անցնել, բնակիչներին լսել, հասկանալ՝ այդ բնակավայրի առաջնահերթ խնդիրներից որոնք են, որ այս տարի պետք է լուծել»,-ասաց Սանոսյանը՝ համոզմունք հայտնելով, որ մասնակցային բյուջետավորման համակարգը բավականին արդիական մեթոդ է:

Ըստ այդմ՝ փորձնական տարբերակով այն կկիրառվի Ջերմուկ, Աշտարակ, Աբովյան եւ Արմավիր համայնքներում, իսկ հաջողելու դեպքում կընդլայնվեն եւ՛ աշխարհագրությունը, եւ՛ մեթոդի կիրառման ուղղությունները:

Գերատեսչության ղեկավարի խոսքով՝ գումարի կեսը հիմնականում կբաշխվի համաչափությամբ, իսկ մյուս մասը՝ որոշակի բանաձեւեր կիրառելով:

«Կարեւոր է, որ հնարավորություն կստեղծվի՝ մարդիկ կարողանան քվեարկել էլեկտրոնային կամ այլ հարթակներով: Այս մեթոդով համայնքին ու Կառավարությանը կհուշեն, թե որ ծրագրերն են առաջնային»,-պարզաբանեց նախարարը՝ ընդգծելով, որ այդկերպ բնակիչները մասնակից կդառնան իսկապես առաջնային խնդիրների լուծմանը, բացի այդ, լսելի կլինի նրանց ձայնը, բարձրացրած խնդիրը:

Կառավարությունն ակնկալում է այս մեթոդի կիրառմամբ մեծ մասնակցություն: Նախարարը հույս է հայտնում, որ քվեարկված, առաջարկված ծրագրերն իսկապես կհամընկնեն համայնքի ամենաառաջնային խնդիրներին, ինչը, ըստ Սանոսյանի, կնշանակի, որ ծրագիրը ճիշտ է աշխատում: Այս գործիքի արդյունավետ կիրառման դեպքում նախատեսվում է այն օգտագործել նաեւ մյուս ծրագրերի համար:

Անդրադառնալով ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքների սուբվենցիոն կարգի բարեփոխմանը՝ ՏԿԵ նախարարը նշեց, որ նախ՝ վերլուծվել է այս տարիներին այդ համայնքներում կատարված աշխատանքների ծավալը: Արդյունքում պարզ է դարձել, որ ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում, ընդհանուր առմամբ, մոտ 1,7 միլիարդ դրամի չափով աշխատանքներ են կատարվել, ինչը, Սանոսյանի գնահատմամբ, համեմատության մեջ բավարար չէ:

Մյուս կողմից՝ բավարար չեն այդ համայնքների բյուջետային միջոցները: Ուստի, Կառավարությունը երկու գործիք է ներդրել 2024 թվականից կիրառելու համար. բացառապես ազգային փոքրամասնություններով բնակեցված այն համայնքների համար, որոնք մինչեւ 3500 բնակիչ ունեն, եւ նրանց դոտացիոն գումարները կազմում են ընդամենը 10-20 միլիոն դրամ, նոր դոտացիոն կարգով սահմանվել է առնվազն 50 միլիոն դրամի չափով շեմ: Բացի այդ, սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար Կառավարությունն իր կողմից ֆինանսավորման չափը կավելացնի եւս 15 տոկոսով՝ 60-ից հասցնելով 75 տոկոսի:

«Մեծ հաշվով, կդառնա, որ գրեթե ամբողջ գումարը Կառավարությունն է տալիս, որովհետեւ մի մասը տալիս է դոտացիայով, մի մասը՝ հավելյալ տոկոսներով»,-ավելացրեց ՏԿԵ նախարարը՝ եւս մեկ անգամ ընդգծելով, որ խոսքը վերաբերում է բացառապես ազգային փոքրամասնություններով բնակեցված 9 համայնքի:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐԴԱՐ ԱՌԵՎՏՈՒՐ

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՓԱԹԵԹ

2024 թվականի հունվարի 16-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել եւ արդեն իսկ հրապարակվել են ««Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից հայտնում են, որ նշված օրենսդրական փոփոխություններով արդար առեւտրի կանոններ են սահմանվել փոքր եւ միջին տնտեսվարողների եւ առեւտրային ցանցերի միջեւ մատակարարման հարաբերություններում մի շարք խնդիրներ կարգավորելու նպատակով, մասնավորապես՝ ուշ վճարումները, պայմանագիր կնքելուց անհիմն հրաժարվելը, ապրանքներն անհավասար պայմաններով ցուցադրելը եւ այլն:

Նոր կարգավորումների համաձայն՝ առեւտրային ցանցը պարտավոր է՝

- ունենալ պաշտոնական կայք, որում պետք է հրապարակվեն հավանական մատակարարի ապրանքի ընտրության նվազագույն պահանջները եւ սկզբունքները, իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկը, ապրանքի ցուցադրման պայմանները, մատակարարման հարաբերությունների դադարեցման հիմքերը,
- մատակարարարի հետ կնքել գրավոր պայմանագիր, որն առնվազն պարունակում է պայմանագրի գինը, վճարման կարգը, ժամկետները կամ դրանց որոշման կարգը եւ այլն,
- մատակարարին վճարումն իրականացնել սննդամթերքի համար ոչ ուշ, քան 30, ոչ պարենային ապրանքների համար՝ ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում: Ընդ որում՝ վերոնշյալ վճարումների կատարման 3 միլիոն կամ ավելի դրամի չափով 90 օրացուցային օր կամ ավելի ժամկետով կետանցը կարող է հանգեցնել բանակցային ուժեղ դիրքի չարաշահման, որի դեպքում հանձնաժողովը կարող է նշանակել տուգանք տնտեսվարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչեւ տասը տոկոսի չափով:

Վերոնշյալ կարգավորումներն ուժի մեջ են մտնում 2024 թվականի մայիսի 6-ից:

Հիշեցնենք, որ օրենսդրական բարեփոխումների փաթեթը մշակվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից՝ էկոնոմիկայի նախարարության եւ ՎՋԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի հետ համագործակցությամբ:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՄՏԱՀՈԳԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ

«Նախատեսում եմ սկսել ամուսնության տարիքային շեմը բարձրացնելու օրենսդրական փոփոխությունների գործընթաց»,- Ազգային ժողովում փետրվարի 15-ին «Մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում ամուսնության տարիքային շեմը բարձրացնելու վերաբերյալ օրենսդրական փոփոխություններ» լսումների ժամանակ հայտարարեց իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր Ռուստամ Բաքոյանը:

Նա նախատեսում է այդ օրենսդրական բարեփոխումներն իրականացնել 2024 թվականին: «Որպես խորհրդարանում եզդիական համայնքի ներկայացուցիչ՝ ես բազմաթիվ մտահոգիչ հաղորդագրություններ եմ ստանում՝ հատկապես եզդի համայնքում վաղ ամուսնությունների հետ կապված: Պետք է ասեմ, որ այս խնդիրը բավականին տարածված է: Վաղ ամուսնությունների դեպքեր կան նաեւ հայերի շրջանում»,- ասաց պատգամավորը:

Նա հիշեցրեց, որ գործող օրենսդրության համաձայն՝ տարիքը, որը թույլ է տալիս զույգերին ամուսնանալ, 18 տարեկանն է: Ընդ որում՝ անձը կարող է ամուսնանալ 17 տարեկանում, սակայն ծնողների, որդեգրողների կամ խնամակալի համաձայնությամբ: Անձինք կարող են ամուսնանալ 16 տարեկանում, այնուամենայնիվ, պայմանով, որ կա ծնողների, որդեգրողների կամ խնամակալների համաձայնությունը, ինչպես նաեւ եթե ամուսնության մեջ մտնող մյուս անձը 18 տարեկանից բարձր է:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

«Մինթ» ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի օբյեկտի՝ «Ջուլիս» ռեստորանի (ք. Երեւան, Պուշկինի 39), արտադրական գործունեության կասեցման հիմք, բացի վտանգավոր արտադրանքի թողարկումից, հանդիսացել են նաեւ իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումները:

Մասնավորապես՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչների կողմից իրականացված ստուգման ընթացքում օբյեկտի ալրային հրուշակեղենի պատրաստման տեղամասում հայտնաբերվել են հետեւյալ անհամապատասխանությունները՝

սննդի կառույցն ապահովված չի եղել լվացող եւ ախտահանող նյութերի՝ սննդամթերքից առանձնացված պահման տարածքներով,

պատերը չեն ունեցել հարթ մակերես, չեն գտնվել նորոգ վիճակում, պատրաստված չեն եղել հեշտությամբ մաքրվող, անջրանցիկ, չներծծող, լվացվող նյութերից,

առաստաղները եւ վերին ամրությունները, պատուհաններն ու այլ բացվածքները նախագծված եւ կառուցված չեն եղել այնպես, որ կանխարգելվի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոլորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը եւ մասնիկների թափվելու հնարավորությունը, բացակայել են միջատապաշտպան ցանցերը,

սանհանգույցի դուռն անմիջապես բացվել է դեպի սննդամթերքի մշակման սենյակ,

սննդային թափոնները տեղավորված չեն եղել համապատասխան փակ բեռնարկղում:

Վերահսկող մարմինը սահմանել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

«ԱՄԱՐՅԱՆ»

18 ՄԻԼԻՈՆ ՀՀ ԴՐԱՄ՝ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆԸ

«Ամարյան» բարեգործական հիմնադրամը 18 միլիոն ՀՀ դրամ է նվիրաբերել Սյունիքի մարզի Գորիս համայնքում «Վիննեթ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից «301 Իմաստության երկիր» հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Տարեցների ցերեկային ժամանցի եւ խնամքի կենտրոն» ծրագրի համար, որի առաջնահերթ նպատակն է ապահովել Լեռնային Ղարաբաղից տեղահանված եւ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցների բարեկեցությունը: Գումարը կուղղվի տարեցների կենտրոնի շենքի գնմանը:

«Վիննեթ Գորիս» զարգացման հիմնադրամի այս կենտրոնը կունենա 24 սենյակ, սոցիալական ճաշարան, ցերեկային կենտրոն՝ այս խոցելի խմբին ապահովելով արժանապատիվ կենցաղային պայմաններով եւ սոցիալական ծառայություններին հասանելիությամբ, ինչպես նաեւ ապահով միջավայր կստեղծի շփման եւ միայնության ու մեկուսացման զգացողության հաղթահարման համար:

«Այս նախաձեռնությունը համահունչ է մեր հիմնադրամի համոզմունքներին եւ արժեքներին: Արցախում տեղի ունեցածը լուրջ մարդասիրական մարտահրավեր է ստեղծել, եւ, համագործակցելով «Վիննեթ Գորիս» զարգացման հիմնադրամի նման կազմակերպությունների հետ, որը Սյունիքում ավելի քան 15 տարի զբաղվում է սոցիալական ծրագրերով, «Ամարյան» բարեգործական հիմնադրամը ցանկանում է շոշափելի դրական փոփոխություն մտցնել այս ճգնաժամից տուժածների կյանքում»,- ասել է «Ամարյան» բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Դավիթ Ամարյանը:

«Մեր արմատները Սյունիքից են, եւ այս մարզն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մեր սրտերում: Չէինք կարող մեր ներդրումը չունենալ Սյունիքի հրատապ կարիքներին ուղղված այս նախաձեռնության մեջ»,- նշել է «Ամարյան» բարեգործական հիմնադրամի համահիմնադիր Վարդան Ամարյանը՝ ընդգծելով աջակցության ջանքերի համակարգված լինելու կարեւորությունը:

Նա նշել է, որ կենտրոնը կտրամադրի անհրաժեշտ ապաստան եւ աջակցություն այն տարեցներին, որոնք կորցրել են իրենց տունն ու հարազատներին:

«Վիննեթ Գորիս» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ռուզաննա Տոռոզյանն ասել է, որ 2020 թվականի պատերազմից հետո «Վիննեթ Գորիս»-ը ընդլայնել է իր գործունեության շրջանակը՝ մարդասիրական աջակցություն ցուցաբերելով նաեւ Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին: «Ակնհայտ էր, որ այս դժվարին իրավիճակում առավել խոցելին առանց խնամքի մնացած տարեցներն են, թոշակառուները, որոնք ամենաշատն են հոգատարության կարիք զգում: Կարեւոր է ստեղծել պայմաններ, որպեսզի տարեցներին արժանապատիվ սոցիալական ծառայություններ մատուցվեն, նրանց զբաղվածության ու ժամանցի հարցը լուծվի: Գաղափարները շատ են, եւ դրանք իրականացնելու համար մեզ գործընկերներ են պետք: Առաջինն արձագանքեց «Ամարյան» բարեգործական հիմնադրամը, ինչի համար շնորհակալ ենք: Մենք գնահատում ենք վստահությունը, տարեցների խնդիրները թեթեւացնելու պատրաստակամությունը: Վստահ ենք, որ այս համագործակցությունը որակապես փոխելու է հարյուրավոր տարեցների կյանքը, իսկ նրանց ջերմացնող ժպիտները, հոգսաշատ կյանքը մի փոքր ուրախ դարձնելը մեզ համար ամենակարեւորն են: Այս մեծ գաղափարի կյանքի կոչման համար յուրաքանչյուրի ջանքերն ու ներդրումներն, անկասկած, ողջունելի են»,- նշել է Ռուզաննա Տոռոզյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԴԱՏԱՎՃԻՌ ՉԷ

«ՀԱՂԹՈՂ՝ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐՈՒՄ»

Քաղցկեղի դեմ տարած հաղթանակը խորհրդանշող զանգը եւս մեկ անգամ հնչեց. այս անգամ այն հնչեց 10-ամյա Ալեքսի համար՝ ազդարարելով առողջ կյանքի սկիզբը: Վանաձորցի Ալեքսը անձամբ հնչեցրեց խորհրդանշական զանգը, ապա շրջեց արյունաբանական կենտրոնում՝ բուժում ստացող բոլոր բալիկներին մաղթելով շուտափույթ ապաքինում:

10-ամյա Ալեքսը իր բուժող բժշկի կողմից ստացավ նաեւ խորհրդանշական մեդալը՝ «Հաղթող՝ կյանքի պայքարում»:

Երազանքներ ու նպատակներ Ալեքսը շատ ունի, որոնց մեծ մասը կապված են քաղցկեղ ունեցող մարդկանց օգնելու հետ:

«Երբ մեծանամ, երազում եմ բանկի կառավարիչ դառնալ, որ կարողանամ շատ գումար աշխատել եւ նվիրել հիվանդանոցին քաղցկեղով հիվանդ երեխաների բուժման համար»,- ասաց Ալեքսը:

Ալեքսին բուժող բժիշկ, արյունաբան Գրիգոր Վարդանյանը նշեց, որ երկու տարի բարդ ճանապարհ են անցել, բայց կարողացել են հաղթահարել սուր լիմֆոբլաստային լեյկոզ հիվանդության բավականին բարդ տարբերակը:

«Բուժման ընթացքում ունեցանք բարդություններ, որոնք Ալեքսը հաջողությամբ հաղթահարեց, եւ այսօրվա մեդալը, որ նա ստացավ՝ որպես կյանքի համար պայքարում հաղթող, միանշանակ արդարացված է, քանի որ նա այս պայքարում իրապես հաղթող է: Այսօր նա հաջողությամբ ավարտել է եւ՛ հիմնական, եւ՛ բուժմանը հաջորդող պահպանողական բուժման փուլը»,-ասաց արյունաբանը:

«Սիթի Օֆ Սմայլ» հիմնադրամի տնօրեն Էսթեր Դեմիրճյանը նշեց, որ հիմնադրամը նոր ձեւաչափով քաղցկեղով հիվանդ փոքրիկների կողքին է 2018 թվականից՝ ֆինանսավորելով 750 երեխայի բուժում, որոնցից 450-ն արդեն ավարտել են իրենց բուժումը:

«Այս օրը, բնականաբար, շատ հատկանշական է, քանի որ մանկական քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն է, բայց բոլորս էլ հասկանում ենք, որ մենք այդ պայքարը տանում ենք եւ տանելու ենք տարին 365 օր անդադար»,-ասաց Դեմիրճյանը:

Հիմնադրամի առաքելությունն այսօր կարեւոր դեր ունի, քանի որ, ըստ տնօրենի, շատ-շատերը առանց հիմնադրամի աջակցության չէին կարողանա հոգալ բուժման ծախսերը: Ըստ նրա՝ հիվանդների 70 տոկոսը գալիս են մարզերից եւ ունեն սոցիալական ծանր վիճակ:

Իրենց բուժման ավարտն ազդարարած փոքրիկներն ապացույցն են այն գաղափարի, որ քաղցկեղը դատավճիռ չէ, այն կարելի է հաղթահարել բժիշկների, աջակիցների, դրական եւ հաղթական տրամադրվածության շնորհիվ:

Փետրվարի 15-ը Մանկական քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն է: Ամբողջ աշխարհը 2002 թվականից ամեն տարի փետրվարի 15-ը նշում է որպես մանկական քաղցկեղի դեմ պայքարի օր: Այս նախաձեռնության նպատակն է հասարակության ուշադրությունը հրավիրել երեխաների քաղցկեղով հիվանդացության խնդիրներին, բարձրացնել մանկական քաղցկեղի վերաբերյալ տեղեկացվածությունը եւ աջակցություն ցուցաբերել հիվանդ երեխաներին ու նրանց ընտանիքի անդամներին:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»-150

ՄԵՐ ԱՆՑՅԱԼՆ Է, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ...

«Սասունցի Դավիթ» էպոսի առաջին հրատարակության 150-ամյակի առթիվ փետրվարի 15-ին Հայաստանի ազգային գրադարանում անցկացվեց «Էպոսի լավագույն ընթերցող» խորագրով խաղ-մրցույթը:

Մրցույթին մասնակցեցին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական հիմնադրամի (Պոլիտեխնիկի) ավագ դպրոցի աշակերտները՝ «Սասուն», «Առյուծ Մհեր», «Մարաթուկ» թիմերով: Հաղթեց «Մարաթուկ»-ը:

Հիմնադրամի ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի, բանասիրական գիտությունների թեկնածու Շուշանիկ Կուրղինյանը հիշեցրեց՝ 1874-ին հայ հոգեւորական, բանասեր-բանահավաք, ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանը տպագրել է «Գրոց ու բրոց» ավանդությունների ու զրույցների ժողովածուն, որի հավելվածում լույս է տեսել «Սասնա ծռեր» էպոսի իր հայտնաբերած ու գրառած առաջին պատումը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով:

«Սա հրաշալի առիթ է անդրադառնալու մեր ազգային հարստությանը: Միջոցառումը նպատակ ունի մատաղ սերնդի շրջանում խրախուսելու էպոսի ընթերցումը, խթանելու դրա ճանաչումն ու բացառիկ դերի գիտակցումը: Մեր օրերում շատ կարեւոր է աշակերտներին մեր արժեքներին ծանոթացնել, նրանց դաստիարակել հայեցի, համամարդկային գաղափարներով, իսկ էպոսը դրա լավագույն օրինակն է»,-շեշտեց Կուրղինյանը:

Նրա հավաստիացմամբ՝ կրթական համակարգում հիմնական անելիքն ուսուցիչների ուսերին է. աշակերտը խոպան դաշտ է, եւ ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ սերմեր ցանել, ճիշտ գաղափարներ փոխանցել, արժեհամակարգ ձեւավորել, քանի որ հասարակությանը պիտանի քաղաքացիներ տալու առաքելությունն է վստահված դպրոցին:

«Ուսուցիչը պետք է պատրաստված լինի, ունենա բավարար գիտելիքեր՝ արդիական լույսով ներկայացնելու էպոսը, որ աշակերտը ցանկություն ունենա սովորելու, հասկանա, թե ինչու է հարկավոր ընթերցել էպոսը, որը մեր անցյալն է, ներկան ու մեր ապագան»,-ասաց Շուշանիկ Կուրղինյանն ու հավելեց՝ նախաձեռնությունը շարունակական է լինելու:

Մրցույթի ժյուրիի կազմում էր գրականագետ, էպոսագետ, բ.գ.թ., ԵՊՀ հայ գրականության ամբիոնի դասախոս Հայկ Համբարձումյանը, որի խոսքով՝ մինչ «Գրոց ու բրոց» ավանդությունների ու զրույցների ժողովածուի հրատարակումը էպոսը տարածված էր Արեւմտյան Հայաստանում սասունցիների, մշեցիների, մոկացիների շրջանում, իսկ Գարեգին Սրվանձտյանը 1873-ին հայտնաբերեց այն, 1874-ին հրատարակեց, ինչի արդյունքում մեծ հետաքրքրություն առաջացավ էպոսի նկատմամբ, որը չի մարում մինչ օրս:

«Հայ ժողովուրդն այս էպոսի մեջ գտնում է իր էությունը, ինքնությունը, ձգտում է նմանվել էպոսի հերոսներին, հատկապես՝ Սասունցի Դավթին, որը հերոսական ոգի ունի, ապավինում է իր նախնիների հզորությանը, սիրում է հայրենիքը, մեծ հարգանք է տածում միջավայրի հանդեպ: Մենք առաջին հերթին մեզ նույնացնում ենք Դավթի խիզախության, ծռության հետ, համարում ենք, որ ծռությունը խիզախության բարձրագույն դրսեւորում է, բայց էպոսում նաեւ այլ հերոսներ կան, որոնք կարողանում են հզորացնել, շենացնել երկիրը»,-ընդգծեց Համբարձումյանն ու հավելեց, որ կարեւոր է ազնվությունը սեփական երկրի, հայրենիքի, անցյալի հիշատակների նկատմամբ, ինչն էպոսի ուղերձներից է: Նա հիշեցրեց՝ Դավիթը սպանվում է այն ժամանակ, երբ տոհմիկ սրբությանը դավաճանում է՝ սխալ երդում տալով:

Գրականագետը կարծում է՝ հոբելյանական միջոցառումներն առիթ դարձնելով՝ առնչվում ենք մեր մեծ ու գաղափարական արժեքների հետ, որոնք սերմանում են հայրենասիրություն, առաքինություն, բարեպաշտություն, ստեղծում ու ներկայացնում են հայի լավագույն տեսակը:

Միջոցառմանը զուգահեռ Ազգային գրադարանի փոքր ցուցասրահում բացվեց հայկական ժողովրդական էպոսին նվիրված գրականության ցուցադրություն:

Գրադարանի հանրային կապերի բաժնի առաջատար գրադարանավար Նարինե Գիժլարյանը, ներկայացնելով ցուցանմուշները, ասաց. «Ցուցադրված է 1874 թվականին հրատարակված գիրքը, որից հետո սկսվում են «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրությունները: Բանահավաքները հավաքել են տարբեր մարդկանց պատմությունները՝ կապված էպոսի հետ, եւ 1936 թվականին Մանուկ Աբեղյանի ձեռամբ կազմվել է առաջին հատորը, հետագայում՝ եւս երկուսը, որոնք եւս ցուցադրված են: Հնարավոր է տեսնել նաեւ Հակոբ Կոջոյանի ձեւավորմամբ, Սարգիս Հարությունյանի մշակմամբ էպոսը, ազգային գրադարանի կազմած մատենագիտությունը, ցուցադրված է նաեւ «Սասունցի Դավիթ» առաջին համահավաք բնագիրը, որի (1939) 85-ամյակն է նշվում: Այն կազմել են Մանուկ Աբեղյանը, Գեւորգ Աբովը, Արամ Ղանալանյանը, խմբագրել է Հովսեփ Օրբելին, իսկ նկարազարդումների հեղինակը Մհեր Աբեղյանն է»:

Ցուցասրահում հնարավոր է տեսնել նաեւ «Սասնա ծռեր» էպոսի խորհրդային շրջանի հրատարակություններ, «Սասունցի Դավիթ» էպոսի գրական մշակումները, որոնք իրականացրել են Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյան, Թոթովենցը, Սիտալը եւ այլք, էպոսի թարգմանություններն ու հայտնի ձեւավորումները:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ Է ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆ

Օհանավանի տարածքում՝ Քասախի կիրճում, բնակիչներից մեկը սեփական տարածքում հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերել է միջնադարյան ժայռափոր դամբարան: Այս մասին հաղորդագրություն է տարածել Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի Արագածոտնի մարզային ծառայության կողմից դեպքն արձանագրվել է, եւ աշխատանքները դադարեցվել են: Քննարկվել են աշխատանքների ընթացքում հայտնաբերված հնագիտական առարկաները պետությանը հանձնելու եւ հրատապ պեղումների անհրաժեշտությունը: Առաջիկայում նոր հայտնաբերված հուշարձանը կվկայագրվի եւ կստանա նաեւ նորահայտ հուշարձանի կարգավիճակ»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԿԳՄՍ նախարարության պատվիրակությունը քննարկել եւ հստակեցրել է նաեւ Աղձքի հայոց արքաների դամբարանի նորոգման, ամրակայման եւ տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի ձեռք բերման մրցույթի տեխնիկական բնութագիրը եւ պահանջները: Նախագծի մրցույթը ԿԳՄՍ նախարարությունը կիրականացնի առաջիկա օրերի ընթացքում: Քննարկվել է նաեւ Աղձք պատմամշակութային արգելոցի հարակից տարածքը հանրության գերակա շահ ճանաչելու եւ արգելոցի տարածքին միացնելու հարցը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արտյոմ Նորայրի Մակարյանս (ծնված 12.10.1994թ., ՀԾՀ՝ 012340642) 15.06.2012 թվականին ավարտել եմ «Երեւանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը «Խոհարարական գործ» մասնագիտությամբ եւ ստացել N 015500 դիպլոմ, որը կորցրել եմ:

Խնդրում եմ գտնելու դեպքում զանգահարել 091 415 389 հեռախոսահամարով:

ՄԱՐԶԱԿԱՆ

35 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության փետրվարի 15-ի նիստում գործադիրը շուրջ 35 մլն դրամ է հատկացրել 2024 թվականի փետրվարի 17-26-ն Ավստրիայում եւ Հայաստանում անցկացվելիք բասկետբոլի աշխարհի առաջնության նախընտրական փուլի հանդիպումների մասնակցության, կազմակերպման եւ անցկացման նպատակով:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից հայտնում են, որ աշխարհի 2027 թվականի առաջնության նախընտրական առաջին փուլում Հայաստանի հավաքականն ընդգրկվել է C ենթախմբում, որտեղ կմրցի Ավստրիայի եւ Ալբանիայի հավաքականների հետ:

Մասնավորապես՝ Հայաստանի ազգային հավաքականը փետրվարի 22-ին կհյուրընկալվի Ավստրիայի ընտրանուն, իսկ փետրվարի 25-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացվի Հայաստան-Ալբանիա հանդիպումը:

Աշխարհի առաջնության նախընտրական փուլին մասնակցում են 10 հավաքականներ, որոնք ընդգրկված են 3 ենթախմբերում: Հաջորդ փուլի ուղեգիր կնվաճեն ենթախմբերում առաջին հորիզոնականը զբաղեցրած թիմերը եւ երկրորդ հորիզոնականում հայտնված լավագույն արդյունքով հավաքականը:

ՈՒՆԱԿ ԷՐ ԱՎԵԼԻՆ

Ծանրամարտի Եվրոպայի առաջնության կրկնակի չեմպիոն Գոռ Սահակյանը նպատակ ունի փոխել քաշային կարգը:

«Չեմպիոնությունը պահպանելն ավելի դժվար է: Այս առաջնությանը մոտ մեկ ամիս եւ 10 օր էինք պատրաստվել: Ժամանակը քիչ էր: Կարող էի ավելին անել, նույնիսկ ավելին, քան արել էի Երեւանում նախորդ տարի կայացած առաջնությունում: Չստացվեց: Փառք Աստծո, որ այս կիլոգրամներով կրկնեցի Եվրոպայի չեմպիոնությունը: Փորձելու եմ հետագայում բոլոր սխալներս ու թերությունններս շտկել: Այս հաղթանակը նվիրված է հայ ազգին, հայ զինվորին, բոլոր նրանց, որոնք ի սրտե ուրախացել ու հավատացել են ինձ»,- ասաց Եվրոպայի չեմպիոնը:

Սահակյանի խոսքով՝ ինքն ունակ էր ավելին անել թե՛ Պոկում, թե՛ Հրում վարժություններում, իսկ գրանցած արդյունքը չի բավարարում իրեն:

«Կարծում եմ՝ քաշային կարգս կփոխեմ, իսկ մնացածը ժամանակը ցույց կտա»,-ընդգծեց նա:

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնության 67 կգ քաշային կարգում Սահակյանը Պոկում վարժությունում մեկ հաջող մոտեցմամբ բարձրացրեց 140 կգ եւ դարձավ փոքր բրոնզե մեդալակիր:

Հրում վարժությունում Սահակյանը մեկ մոտեցմամբ դարձավ այս վարժության ոսկե մեդալակիր՝ գլխավերեւում պահելով 171 կգ: Երկամարտի 311 կգ արդյունքով նա դարձավ ԵԱ ոսկե մեդալակիր:

● Փետրվարի 20-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Հովեր» պետական կամերային երգչախմբի համերգը: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որտե՞ղ պետք է դիմի քաղաքացին ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն ստանալու համար:

Ռիտա Աղաբեկյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը, մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)՝ ներկայացնելով դիմում-հայտարարագիր, ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար իր ընտանիքի անապահովության բնութագրիչների մասին ամբողջական տվյալները հավաստող փաստաթղթեր:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական նպաստի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակվող եւ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր եւ ե՞րբ կարող են անվճար այցելել թանգարաններ:

Մարիամ Մեջլումյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ մշակույթի նախարարության ենթակայութամբ գործող թանգարանների մշտական ցուցադրությունների անվճար այցելության արտոնություններ են սահմանված թանգարանային աշխատողների, պետական պաշտոնական պատվիրակությունների, մշակույթի ժառանգության բնագավառի ուսանողների, ժամկետային զինծառայողների, ՀՀ ստեղծագործական միությունների անդամների, լրագրողների (տեղեկույթ ստանալու կամ լուսաբանելու նպատակով), նախադպրոցական տարիքի երեխաների համար՝ աշխատանքային բոլոր օրերին, (այցելուի կամ խմբի ղեկավարի կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայությունը եւ թանգարանի կողմից դրանց պահպանությունը պարտադիր է):

ՀՀ կրթության գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մյուս բոլոր այցելուների համար թանգարաններ այցելությունն անվճար է յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



19-ամյա Գոռը Պոկում վարժությունում 140 կգ-ով բավարարվեց փոքր բրոնզով, սակայն Հրում վարժությունում առաջին մոտեցմամբ գլխավերեւում պահելով 171 կիլոգրամը՝ հավասարը չունեցավ այս վարժությունում, իսկ երկամարտի 311 կգ-ով երկրորդ անգամ անընդմեջ նվաճեց չեմպիոնական տիտղոսը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 1	+ 3 + 6
Կոտայքի լեռներ	0 - 3	+ 2 + 5
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6	+ 7 + 10
Գեղարքունիք	- 3 + 1	+ 2 + 6
Լոռի	- 1 + 2	+ 2 + 5
Տավուշ	0 + 5	+ 3 + 7
Արագածոտնի լեռներ	0 - 3	+ 2 + 4
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7	+ 8 + 12
Արարատ	+ 4 + 7	+12 + 14
Արմավիր	+ 4 + 7	+11 + 13
Վայոց ձորի լեռներ	- 1 - 5	+ 2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7	+10 + 14
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5	+ 8 + 11
Սյունիքի նախալեռներ	- 1 + 2	+ 3 + 5
ԼՂՀ	- 1 + 3	+ 3 + 6
Երեւան	+ 8 + 10	+13 + 15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*